ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

Հարգելի՛ գործընկերներ,

2025 թվականի դեկտեմբերի 25-ից ուժի մեջ է մտել «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքը, համաձայն որի 2026 թվականի հունվարի 1-ից իրականացվում է առողջության համընդհանուր ապահովագրության փուլային ներդրում: ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է «Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1980-Ն որոշումը: Հիմք ընդունելով վերոնշյալ Կառավարության որոշմամբ հաստատված պայմանագրի օրինակելի ձևը՝ առաջարկում եմ հայտարարությանը կից տեղադրվող դիմումը (ակցեպտը)՝ ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում «Առողջության համընդհանուր ապահովագրության» հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության» հիմնադրամի և դեղատների միջև պայմանագիր կնքելու ընթացակարգը, պայմանագիր կնքելու համար նախատեսված նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1985-Ն որոշմամբ սահմանված պահանջներով և համապատասխան փաստաթղթերով մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ներկայացնել info@uhif.am էլեկտրոնային հասցեին:

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ info@moh.am